Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 23-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեն (այսուհետ՝ նաև Կոմիտե), որը, որպես քննչական մարմին, կազմակերպում ու իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը և իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

Հակակոռուպցիոն կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում և իրականացնում է՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով, Կոմիտեի կանոնադրությամբ, Կոմիտեի նախագահի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերով, հուշագրերով, համաձայնագրերով և այլ իրավական ակտերով:

ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով սահմանված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն կատարելու իրավասությունը, 2021 թվականի հոկտեմբերի 23-ից վերապահվել և 2024 թվականին նույնպես իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնների համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն ենթադրյալ հանցանքների վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննություն կատարելու իրավասությունն ամբողջությամբ վերապահվել է Հակակոռուպցիոն կոմիտեին:

Օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար Կոմիտեում 2024 թվականին նախատեսված է եղել 275 հաստիք, որից 80-ը՝ ինքնավար, 120-ը՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող, 39-ը՝ քաղաքացիական ծառայության, 8-ը՝ հայեցողական պաշտոններ և 28-ը՝ տեխնիկական սպասարկում ու քաղաքացիական աշխատանք կատարող անձինք:

2024 թվականի ընթացքում՝ ընդհուպ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը, Կոմիտեի հաստիքներն ամբողջությամբ համալրված չեն եղել, ինչն իր էական ազդեցությունն է ունեցել աշխատանքի ծանրաբեռնվածության աճի վրա: Հաստիքների համալրման նպատակով կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ մրցույթներ: Արդյունքում՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 80 ինքնավար պաշտոններից համալրված են եղել 70-ը կամ 87,5%-ը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող 120 պաշտոններից՝ 77-ը կամ 64,2%-ը, քաղաքացիական ծառայության 39 պաշտոններից՝ 35-ը կամ 89,7%-ը, հայեցողական 8 պաշտոններից՝ 6-ը կամ 75%-ը, իսկ տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք կատարող 28 հաստիքներից՝ 25-ը կամ 89,3%-ը:

Հարկ է նկատել, որ Կոմիտեի ծառայողների համալրման 2024 թվականի վերջին մրցույթները գտնվում են ընթացքի մեջ՝ բարեվարքության ուսումնասիրության փուլերում

/իրականացվում է 5 թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը/:

Հետևաբար, 2024 թվականի ընթացքում կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով գործերի քննությունը Հակակոռուպցիոն կոմիտեում առավելագույնն իրականացվել է ընդամենը 71 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից, որոնցից նախաքննություն կատարող պաշտոնատար անձանց (քննիչներ, վարչության պետի տեղակալներ) թիվը կազմել է 61-ը (տվյալները ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն իր վարույթ է ընդունել և քննել մեծ քանակի քրեական վարույթներ, քննարկել դիմումներ, հաղորդումներ, ինչի արդյունքում քննիչներն աշխատել են աննախադեպ մեծ ծանրաբեռնվածության պայմաններում:

Չնայած ծանրաբեռնվածությանը՝ Հակակոռուպցիոն կոմիտեն 2024 թվականին էական աշխատանք է կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով արդյունավետ նախաքննություն իրականացնելու, իրավակարգի ու օրինականության ամրապնդման ուղղությամբ:

Քննված քրեական վարույթների մասին

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում **քննվել է 2289 քրեական վարույթ *(այդ թվում՝ կրկնակի)*,** որոնցից **ավարտվել են 849-ը**: Ավարտված վարույթներից **167-ը՝ 374 անձանց վերաբերյալ** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան**, իսկ 682-ը՝ կարճվել**: Կարճված վարույթներից 35-ի վարույթը կարճելու որոշումները դատախազի կողմից վերացվել կամ չեն հաստատվել, իսկ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված վարույթներից դատախազը չի հաստատել 6-ի եզրակացությունը:

Քննության արդյունավետության բարձրացման և միաժամանակ ծանրաբեռնվածության աճի մասին են վկայում 2023 թվականի վիճակագրական տվյալների հետ համեմատական տեղեկությունները: Այսպես՝ 2024 թվականին Հակակոռուպցիոն կոմիտեում 465 վարույթ ավելի է քննվել քան 2023 թվականի ընթացքում (2023 թվականին՝ 1824 վարույթ), 2024 թվականին նախորդ տարվա համեմատությամբ՝ ավարտված վարույթների թիվն աճել է 313-ով (2023 թվականին՝ 536 վարույթ):

Այսինքն՝ 2023 թվականի համեմատությամբ՝ 2024 թվականի ընթացքում քննված վարույթների թիվն աճել է 25,5 %-ով, ավարտված վարույթների թիվը՝ 58,4 %-ով:

Նկատի ունենալով, որ մինչդատական վարույթի վերաբերյալ վիճակագրության գործող կարգավորումների համաձայն՝ հաշվառումը տարվում է կրկնակի քննված վարույթների ցուցանիշների ընդգրկմամբ, ուստի այսուհետ տեղեկությունները ներկայացվում են կրկնակի քննության տվյալների ներառմամբ:

Այսպես.

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների **վարույթում քննվել է 2289 քրեական** վարույթ **(այդ թվում՝ կրկնակի),** որից.

- ✓ փոխանցվել է նախորդ տարվանից՝ ---------- 834,
- ✓ ընդունվել է վարույթ՝ ---------- 1455:

Վարույթ ընդունված քրեական վարույթներից՝

- ✓ **նախաձեռնվել է Հակակոռուպցիոն կոմիտեում՝**---------- 1023,
- ✓ **քննվող քրեական վարույթից մաս է անջատվել՝** ---------- 99,
- ✓ **ստացվել է այլ մարմիններից, դատախազությունից՝**---------- 291,
- ✓ **ստացվել է այլ պետությունից՝**---------- 1,
- ✓ **վերսկսվել են նախկինում կարճված քրեական վարույթներ՝** ---------- 35,
- ✓ **դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը չի հաստատվել և վարույթ է վերադարձվել՝** ---------- 6:

Հաշվետու ժամանակահատվածում քննված 2289 քրեական վարույթից՝

- ✓ **ավարտվել է՝** ---------- **849,**

կամ 37,1%-ը, որից **167** քրեական վարույթ **374** անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, **682**-ը՝ կարճվել,

- ✓ **միացվել է՝** ---------- **220,**
- ✓ **ուղարկվել է ըստ քննչական ենթակայության՝** ---------- **347,**
- ✓ **դատախազի կողմից վերացվել է քրեական վարույթից մաս անջատելու մասին որոշումը՝** ---------- **4,**
- ✓ **անավարտ է մնացել՝** ---------- **869:**

Դատարան ուղարկված քրեական վարույթները *(առանց կրկնակիի)*, ըստ հանցագործությունների բնույթի, եղել են.

1. **Ընտրությունների հետ կապված հանցագործություններ՝** 1 վարույթ՝ 1 անձի վերաբերյալ,
2. **Հափշտակություններ՝** 25 վարույթ՝ 47 անձի վերաբերյալ,
3. **Տնտեսական հանցագործություններ՝** 1 վարույթ՝ 2 անձի վերաբերյալ,
4. **Խուլիգանություն՝** 1 վարույթ՝ 1 անձի վերաբերյալ,
5. **Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններ՝** 121 վարույթ՝ 290 անձի վերաբերյալ,
6. **Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 վարույթ՝ 5 անձի վերաբերյալ,
7. **Այլ հանցագործություններ՝** 11 վարույթ՝ 28 անձի վերաբերյալ:

2024 թվականի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական վարույթներով դատի է տրվել **175 հանրային ծառայող** (այդ թվում՝ պաշտոնատար անձինք), որոնք, ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների, հանդիսացել են՝

1) ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ՝ 1,

2) ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ՝ 1,

3) ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցներ՝ 27,
այդ թվում՝
- ✓ *զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ - 1,*
- ✓ *կորպուսի հրամանատար - 1,*
- ✓ *զորամասի հրամանատար - 2,*
- ✓ *գումարտակի հրամանատար - 2,*
- ✓ *վաշտի հրամանատար - 2,*
- ✓ *դասակի հրամանատար - 2,*
- ✓ *ջոկի հրամանատար - 1,*
- ✓ *ծառայության պետ - 2,*
- ✓ *վարչության պետ - 1,*
- ✓ *բաժնի պետ - 5,*
- ✓ *բաժանմունքի պետ - 1,*
- ✓ *զորամասի կապի պետ - 1,*
- ✓ *բաժնի սպա - 1,*
- ✓ *աշխատակից - 5,*

4) ՀՀ ԱԱԾ աշխատակից՝ 1,

5) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցներ՝ 4,
այդ թվում՝
- ✓ *ՀԿԱԾ բաժնի պետ - 1,*
- ✓ *ՀԿԱԾ հարկադիր կատարող - 3,*

6) ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցներ՝ 44,
այդ թվում՝
- ✓ *բաժնի պետ - 1,*
- ✓ *բաժնի պետի տեղակալ - 1,*
- ✓ *բաժանմունքի պետ - 2,*
- ✓ *ՃՈ պետ - 1,*
- ✓ *գումարտակի հրամանատար - 1,*
- ✓ *դասակի հրամանատար - 1,*
- ✓ *տեսուչ - 6,*
- ✓ *ԱՎՎ մասնագետ - 2,*
- ✓ *ոստիկան - 1,*
- ✓ *պարեկ - 28,*

7) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցներ՝ 13,
այդ թվում՝
- ✓ *վարչության պետ - 1,*
- ✓ *բաժանմունքի պետ - 1,*
- ✓ *մասնագետ - 9,*
- ✓ *փորձագետ - 2,*

8) ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչության պետ՝ 1,

9) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցներ՝ 6,
այդ թվում՝

- ✓ *բաժնի պետ - 2,*
- ✓ *սոցիալական աշխատող - 4,*

10) ՀՀ սնանկության դատարանի դատավոր՝ 1,

11) ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազ՝ 1,

12) ՀՀ ՔԿ քննչական բաժնի քննիչ՝ 6,

13) ՀՀ ՔԿՀ աշխատակիցներ՝ 5,

14) ՀՀ ՊԵԿ աշխատակիցներ ՝ 15,

այդ թվում՝

- ✓ *տեսուչ - 13,*
- ✓ *օպերլիազոր - 2,*

15) ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնություն» ծառայության տնօրեն՝ 1,

16) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վարչության պետ՝ 1,

17) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչ՝ 1,

18) ՀՀ կրթության տեսչական մարմնի մասնագետ՝ 1,

19) Երևանի պետական համալսարանի ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ՝ 1,

20) Երևանի Մ.Հերացու անվան թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի ղեկավարի տեղակալ՝ 1,

21) Երևանի թիվ 2 բուժմիավորում բժշկական կենտրոնի նյարդաբանական բաժնի վարիչ՝ 1,

22) Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրեն՝ 1,

23) Քաղաքապետարանի աշխատակիցներ՝ 9,

այդ թվում՝

- ✓ *վարչական շրջանի ղեկավար - 1,*
- ✓ *վարչության պետ - 1,*
- ✓ *բաժնի պետ - 2,*
- ✓ *բաժնի պետի տեղակալ - 1,*
- ✓ *ՀՈԱԿ վարիչ - 1,*
- ✓ *մասնագետ - 3,*

24) Մարզպետարանի աշխատակիցներ՝ 4,

այդ թվում՝

- ✓ *մարզպետի խորհրդական - 1,*
- ✓ *վարչության պետ - 2,*
- ✓ *մասնագետ - 1,*

25)ՊՈԱԿ աշխատակիցներ՝ 6,

այդ թվում՝

- ✓ *տնօրեն - 3,*
- ✓ *ստորաբաժանման ղեկավար - 1,*
- ✓ *ստորաբաժանման աշխատակից - 1,*
- ✓ *անտառապետ - 1,*

26) Համայնքապետարանի աշխատակիցներ՝ 22,

այդ թվում՝

- ✓ *համայնքի ղեկավար - 15,*

- ✓ *համայնքի ղեկավարի տեղակալ - 1,*
- ✓ *համայնքի ղեկավարի օգնական - 1,*
- ✓ *ճարտարապետ - 1,*
- ✓ *մասնագետ - 2,*
- ✓ *աշխատակից - 2:*

Դատարան ուղարկված քրեական վարույթներից ապացուցման տեսակետից առավել բարդ, բազմադրվագ և ուշագրավ են եղել հետևյալ քրեական վարույթները.

1. ՀՀ ՊՆ բարձրաստիճան պաշտոնատար անձ Սիմակ Աղբալյանը, զբաղեցնելով զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության զորահավաքային վարչության պետի պաշտոնը, իր ծանոթ Արմեն Գյոզալյանի որդուն՝ Սլավիկ Գյոզալյանին 2023 թվականի ամառային զորակոչին հիվանդության հիմքով պարտադիր ժամկետային զինծառայության համար ոչ պիտանի ճանաչելուն նպաստելու նպատակով 2023 թվականի ապրիլի 14-ին Տավուշի մարզի Աչաջուր բնակավայրի իր առանձնատանն Արմեն Գյոզալյանից պահանջել և ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ կաշառք:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա Սիմակ Աղբալյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, իսկ Արմեն Գյոզալյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Ս. Աղբալյանը կալանավորվել է:

Քրեական վարույթը 2024 թվականի մարտի 31-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Գ. Հովհաննիսյան:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, ի թիվս այլնի, ի պաշտոնե լիազորված լինելով իրականացնել մարզի տարածքում պետական կրթական քաղաքականությունը, ինչպես նաև ապահովելու մարզպետարանի ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ների հաստիքացուցակները մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները, իր իշխանական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նվեր Խաչատրյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ վերակազմավորումից հետո նույն ՊՈԱԿ-ի վարչատնտեսական գծով տնօրենի պաշտոնին նրա թեկնածությունն առաջադրելու և նշանակվելուն նպաստելու համար, վերջինից անձամբ պահանջել է խոշոր չափերով՝ 1.552.000 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար կաշառք: Նվեր Խաչատրյանը կնոջ՝ Սուսաննա Բարսեղյանի հետ խմբով համաձայնության են եկել նշված գումարը տալու վերաբերյալ: 2024 թվականի հունիսի 17-ին Նվեր Խաչատրյանը հիշյալ գումարը անձամբ փոխանցել է Հրայր Կարապետյանին:

Բացի այդ, Հրայր Կարապետյանն իր իշխանական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի ուսուցչուհի Անժելա Մանուկյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ վերակազմավորումից հետո նույն ՊՈԱԿ-ի ուսումնական գծով տնօրենի պաշտոնին նրա թեկնածությունն առաջադրելու և նշանակվելուն նպաստելու համար 2024 թվականի հուլիսի 1-ին միջնորդի՝ Նվեր Խաչատրյանի միջոցով պահանջել է խոշոր չափերով 582.000 ՀՀ դրամին համարժեք 1500 ԱՄՆ դոլար կաշառք, որից 388.000 ՀՀ դրամին համարժեք 1000 ԱՄՆ դոլարը միջնորդի միջոցով ստացել է, իսկ մնացած՝ 194.000 ՀՀ դրամին համարժեք 500 ԱՄՆ դոլարը պայմանավորվածության համաձայն պետք է փոխանցվեր նշանակումից հետո:

ՀՀ հակակառուպցիոն կոմիտեում դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ ձեռք են բերվել բավարար ապացույցներ և 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Հրայր Կարապետյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով *(2 դրվագ),* Նվեր Խաչատրյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով և 437-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Անժելա Մանուկյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով: Հ. Կարապետյանն ու Ն. Խաչատրյանը կալանավորվել են:

Հիշյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Ա. Խաչատրյան:

3. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված մեկ այլ քրեական վարույթով պարզվել է, որ Արտաշատի համայնքապետարանի պատվերով իրականացված շինարարական աշխատանքների կապալառու է հանդիսացել «Ավետիս խեցի» ՍՊ ընկերությունը: Իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով, ինչպես նաև քննչական ու վարութային գործողությունների արդյունքում ձեռք են բերվել փաստական տվյալներ այն մասին, որ ճանապարհային շերտի կառուցման ընթացքում նորի փոխարեն տեղադրվել են օգտագործված խողովակներ, նախագծով նախատեսված ավազակոպճի փոխարեն օգտագործվել է հողային զանգված, ասֆալտի շերտի տակ նախագծով նախատեսված 4.12 տոննա բիտումի փոխարեն առավելագույնն օգտագործվել է 1.5 տոննա: Փաստվել է, որ մինչև 2024 թվականի հուլիսի 30-ը ընկերության և համայնքապետարանի միջև կազմվել են կատարողական ակտեր, որոնց հիման վրա պատվիրատու համայնքապետարանը ընդունել է իբր կատարված 937.852.392 ՀՀ դրամ արժեքի աշխատանքները: Այս աշխատանքների դիմաց համայնքապետարանը կապալառուին վճարել է ընդհանուր՝ 648.349.304 ՀՀ դրամ, իսկ մնացած գումարի մասով կապալառուն ձեռք է բերել վճարումը ստանալու իրավունք: Այնինչ, նախաքննության ընթացքում իրականացված փորձաքննությամբ հիմնավորվել է, որ կատարողական ակտերում թվարկված աշխատանքներից ընդհանրապես չեն կատարվել 435.268.928 ՀՀ դրամի աշխատանքները, ինչպես նաև նախահաշիվներով նախատեսված ընդհանուր 75.658.013 ՀՀ դրամ արժեքի նոր

խողովակների փոխարեն տեղադրվել են ընդհանուր 8.725.960 ՀՀ դրամ արժեքի, նախկինում շահագործված և/կամ հնացած խողովակներ:

Բացի այդ, փորձագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակավայրերի հետազոտված ճանապարհային պատվածքների հիմնային շերտերում փաստացի տեղադրված խիճի, կոպիճի և ավազի խառնուրդներից բաղկացած նյութերը չեն բավարարում ՀՀ գործող ստանդարտներին և նորմերին: Իսկ խճային շերտը մասամբ փոխարինված է եղել խճավազային խառնուրդով: Արդյունքում, կատարողական ակտերով ընդունված՝ Արտաշատ քաղաքի և մի շարք բնակավայրերի փողոցների նորոգման, ասֆալտապատման աշխատանքների համար վճարված և վճարման ենթակա ընդհանուր 937.852.392 ՀՀ դրամն ամբողջությամբ դիտարկվել է որպես պատճառված վնաս:

Պարզվել է նաև, որ աշխատանքների կատարման նկատմամբ անմիջական հսկողությունը համայնքի ղեկավարի հանձնարարականի հիման վրա փաստացի իրականացրել է Արտաշատի համայնքապետի օգնական Արգամ Հովակիմյանը: Վերջինս տեղյակ լինելով շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուի կողմից թույլ տրվող խախտումների և հափշտակությունների մասին, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկել դրանք կանխելու, իր ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու ուղղությամբ, այլև օժանդակել է հափշտակություններին:

Բացի այդ, նույն քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետի հանձնարարագրով՝ հարկային տեսուչներ՝ Հայկ Կարապետյանը և Վահե Անդրիասյանը, «Հուսալի շինարար» ՍՊ ընկերությունում իրականացրել են հարկային ստուգում, որի շրջանակներում հայտնաբերված իրավախախտումները չարձանագրելու դիմաց իրենց ընդհանուր ծանոթ Սեյրան Արիստակեսյանի միջոցով ընկերության շահառուներ Տիգրան Արամյանին, Հայկ Ավետիսյանին և Կարապետ Հովհաննիսյանին առաջարկել են իրենց տալ առանձնապես խոշոր չափերով՝ 8.000.000 ՀՀ դրամ կաշառք: Վերջիններս ընդունել են կաշառք տալու առաջարկը:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա հարկային տեսուչներ Վահե Անդրիասյանի և Հայկ Կարապետյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Սեյրան Արիստակեսյանի նկատմամբ՝ 46-435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Կարապետ Հովհաննիսյանի նկատմամբ՝ 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Հայկ Ավետիսյանի և Տիգրան Արամյանի նկատմամբ՝ 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Արծրունի Կարապետյանի նկատմամբ՝ 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, իսկ Արգամ Հովակիմյանի նկատմամբ՝ 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Բացի Արծրունի Կարապետյանից, մնացած յոթ անձինք կալանավորվել են:

Քրեական վարույթով պատճառված վնասի վերականգնման նպատակով արգելադրվել են մեղադրյալների՝ 906.764.274 ՀՀ դրամ շուկայական արժեքով անշարժ գույքերը:

Վերը նշված մեղադրյալների վերաբերյալ քրեական վարույթները մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Վ. Մարտիրոսյան:

4. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի մի շարք ծառայողների կողմից թվով 9 դրվագ կաշառք ստանալու դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ տեսչական մարմնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության պետ Արտաշես Սարգսյանը նշված տեսչական մարմնի այլ ծառայողների հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում կաշառք տվողի օգտին ապօրինի անգործություն դրսևորելու, այն է՝ քաղաքաշինական բնագավառում խախտումների առկայության պայմաններում շինության շահագործման հանձնելուց առաջ սահմանված նորմերի համապատասխանության վերաբերյալ ավարտական փաստաթղթերում դրական կարծիք (եզրակացություն) տալու գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև առկա խախտումների պայմաններում ապօրինի անգործություն դրսևորելու համար կառուցված շինությունների սեփականատերերից և կառուցապատողներից 2023 թվականի ընթացքում թվով 9 դեպքով պահանջել և ստացել են տարբեր չափերի՝ 300-ից 7000 ԱՄՆ դոլարի չափերի կաշառք-գումարներ:

Ստացված կաշառք-գումարները բաշխվել են Արտաշետ Սարգսյանի և մյուս պաշտոնատար անձանց միջև:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա կաշառք ստացողների և կաշառք տվողների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ, և քրեական վարույթը 14 անձանց վերաբերյալ 2024 թվականի մարտի 31-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Ռ. Հակոբյան:

5. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի փողերի լվացման և ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու և առերևույթ այլ հանցանքների դեպքերով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնն զբաղեցրած Արման Սահակյանը խմբային շահերից ելնելով՝ չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, ինչի արդյունքում օտարման ոչ ենթակա՝ 177.539.790 ՀՀ դրամ շուկայական արժեքով պետական անշարժ գույքը, «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ ուղղակի վաճառքով օտարել է իր հետ փոխկապակցված անձանց անվամբ հիմնադրված «Քիդս Քեը» ՍՊ ընկերությանն՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետևանքներ:

Արման Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-

րդ մասով, վերջինս ամբողջությամբ վերականգնել է առերևույթ հանցագործությամբ պետությանը պատճառված վնասը:

Մեղադրյալ Արման Սահակյանի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Բ. Չիլինգարյան:

6. Կաշառք տալու և ստանալու, յուրացման, պաշտոնեական կեղծիքի, ծառայողական լիազորությունները չարաշահելու և առերևույթ այլ հանցանքների դեպքերով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում կատարված նախաքննությամբ պարզվել է, որ մի շարք ուսանողների, այդ թվում՝ Կապան համայնքի ղեկավարի եղբայր Հովհաննես Փարսյանի օգտին թողտվության, ապօրինի գործողություն կատարելու և անգործության համար, այն է՝ վերջիններիս կողմից դասապրոցեսներին չներկայանալու և չմասնակցելու հանգամանքը չարձանագրելու և հերթական կուրս փոխադրումը կազմակերպելու համար «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանը 2023 թվականին նրանց հետ պայմանավորվածություն է ձեռք բերել՝ վերջիններիս կողմից որպես կաշառք տվյալ ուսումնական հաստատության վարչական շենքի լսարաններից մեկը վերանորոգելու վերաբերյալ, որից հետո ուսումնական հաստատության դասախոսներին կարգադրել է չարձանագրել հիշյալ ուսանողների բացակայությունները, ինչի արդյունքում կատարելով նախապես տրված խոստումը՝ հիշյալ ուսանողներին ապօրինի փոխադրել է հաջորդ կուրս:

Բացի այդ, Լեռնիկ Պետրոսյանը, «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության տեղամասի պետի պաշտոնն զբաղեցնող իր որդուն՝ Նահապետ Պետրոսյանին, 2023 թվականին հրամանագրել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում՝ որպես վարորդ, և վերջինիս կողմից փաստացի գործուղման չմեկնելու պայմաններում՝ այդ առնչությամբ կազմած կեղծ գործուղման հրամանների հիման վրա իրեն վստահված դրամական միջոցներից վճարելու միջոցով 11 դրվագով կատարել է վստահված գումարի հափշտակություններ և պաշտոնեական կեղծիքներ:

Լեռնիկ Պետրոսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով *(11 դրվագ),* 445-րդ հոդվածի 1-ին մասով *(11 դրվագ)* և 46-457-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանքներ են ներկայացվել նաև մյուս անձանց:

Մեղադրյալ Լեռնիկ Պետրոսյանի և մյուսների վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Վ. Միքայելյան:

7. Կաշառակերության մի շարք դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը համայնքի տարածքում գտնվող, շինարարության թույլտվությամբ նախատեսված չափերը գերազանցող ապօրինի շինությունն օրինականացնելու և իբրև նոր կառուցված հյուրանոց ՀՀ կադաստրի կոմիտեում անխոչընդոտ գրանցելու, «Գլորիա» կարի ֆաբրիկայի նախկին տարածքում ինքնակամ կառուցված թվով երեք շինությունների ավարտական ակտերն առանց ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի եզրակացության հաստատելու, վարձակալական հիմունքներով օգտագործվող հողամասի վրա շինություն կառուցելու շինարարության թույլտվություն տալու և հետագայում նաև այն սեփականաշնորհելու ապօրինի գործողությունների դիմաց 2024 թվականի տարբեր ամիսների ընթացքում քաղաքացի Սամվել Մարգարյանի միջնորդությամբ և օժանդակությամբ տարբեր քաղաքացիներից պահանջել և ստացել է ընդհանուր առմամբ շուրջ 12. 000. 000 ՀՀ դրամ կաշառք:

Սուրեն Աբովյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով *(2 դրվագ)* և 3-րդ մասի 3-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանքներ են ներկայացվել նաև նրան օժանդակած և կաշառք տված անձանց:

Սուրեն Աբովյանի ու մյուսների վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Վ. Դաշտոյան:

8. Մեկ այլ քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Խաչատուր Խնձրցյանը զբաղեցնելով Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պաշտոնը, 2 դրվագով խմբի կազմում՝ նույն վարչության գլխավոր մասնագետ Մկրտիչ Ասատրյանի հետ միասին «Խաչատուր Պապոյան Սերյոժայի» Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Պապոյանից և Արտակ Հարությունյանից ստացել են ընդհանուր՝ 400.000 ՀՀ դրամ, 1 դրվագով՝ «Անիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերության տնօրեն Կարապետ Առաքելյանից ստացել է խոշոր չափի՝ 1.000.000 ՀՀ դրամ և 3 դրվագով՝ «Մերձմոսկովյան» ԲԲ ընկերության փոխտնօրեն Արտակ Ադամյանից, «Ճանշին» ՓԲ ընկերության տնօրեն Վահագն Բաղդասարյանից ու «Աշոցքի ԱՏՃ» ՓԲ ընկերության գլխավոր ինժեներ Ալեքսան Քոչոյանից ստացել է ընդհանուր՝ 300.000 ՀՀ դրամ կաշառքի գումարներ:

Խաչատուր Խնձրցյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (երեք դրվագ), և 435-րդ հոդվածի 1-ին մասով (երեք դրվագ): Կոռուպցիոն տարբեր

հոդվածներով քրեական հետապնդումներ են հարուցվել նաև Մկրտիչ Ասատրյանի և ևս 6 անձանց նկատմամբ:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Կ. Ղազարյան:

9. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված գաղտնի քննչական գործողություններով և օպերատիվ-հետախուզական միջոցառումներով տվյալներ են ստացվել այն մասին, որ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձը՝ դատավոր Տիգրան Փոլադյանը 2023 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքի սրճարաններից մեկում հանդիպել է իր վարույթում քննվող սնանկության գործերից մեկով սնանկության կառավարիչ Տիգրան Հարությունյանին և պայմանավորվածություն ձեռք բերել վերջինիս օժանդակությամբ, 150.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց, կաշառք տվողների՝ Կարապետ Գուլոյանի, Գարեգին Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի օգտին իր ծառայողական լիազորություններն օգտագործելով բարենպաստ որոշում կայացնելու վերաբերյալ, որից հետո 2023 թվականի նոյեմբերի 11-ին սնանկության գործով կառավարիչը հանդիպել է նույն գործով վերը նշված շահագրգիռ անձանց, ում առաջարկել է դատավորին տալ առանձնապես խոշոր չափերով կաշառք: Վերջիններս համաձայնվել են և Կարապետ Գուլոյանը դեկտեմբերի 12-ին Երևանի <<Ալեքսանդր>> հյուրանոցի մոտակայքում Տիգրան Հարությունյանին է փոխանցել պահանջված գումարից 20.000 ԱՄՆ դոլարը, ինչն էլ վերջինս նույն օրը Երևանի <<Մոն կաֆե>> սրճարանում տվել է Տիգրան Փոլադյանին:

Տիգրան Փոլադյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով: Կոռուպցիոն տարբեր հոդվածներով քրեական հետապնդումներ են հարուցվել նաև մյուս չորս անձանց նկատմամբ:

Տիգրան Փոլադյանը և Տիգրան Հարությունյանը կալանավորվել են, մյուս մեղադրյալների նկատմամբ կիրառվել են այլ խափանման միջոցներ:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Ն. Մենդիկյան:

10. Պաշտոնատար անձանց կողմից խմբի կազմում 4 դրվագ խոշոր և առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու վերաբերյալ քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արարատի տարածքային ստորաբաժանման ղեկավար Արմեն Հովսեփյանը և նույն տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի պետ՝ Աշոտ Վարդանյանը 2024 թվականի հունվար ամսին տարբեր նորակոչիկների պարտադիր զինվորական ծառայությունից

ազատելու կամ տարկետում տրամադրելու նպատակով նորակոչիկների հարազատներից պահանջել և ստացել են ընդհանուր՝ 48.000 ԱՄՆ դոլար գումար: Դրվագներից մեկով նրանց օժանդակել են նաև ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Երևան քաղաքի թիվ 3 տարածքային ստորաբաժանման ղեկավար Սերգեյ Հակոբյանը և վերջինիս վարորդը:

Արմեն Հովսեփյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով *(2 դրվագ)* և 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով *(1 դրվագ):*

Հանրային քրեական հետապնդում է հարուցվել ևս ութ անձանց նկատմամբ՝ խմբի կազմում կաշառք ստանալու, կաշառք տալու, կաշառք տալուն օժանդակելու դեպքերով:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Քննիչ Գ. Բալդրյան:

Կոռուպցիոն հոդվածներով նախաձեռնված վարույթներից 2024 թվականի ընթացքում կարճվել է 628 քրեական վարույթ ***(այդ թվում՝ կրկնակի)***, որից 452-ը կարճվել է ռեաբիլիտացնող, իսկ 176-ը՝ ոչ ռեաբիլիտացնող: Ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ են կայացվել 542 անձի վերաբերյալ:

Կարճված քրեական վարույթները *(այդ թվում կոռուպցիոն, առանց կրկնակիի),* ըստ հանցագործությունների բնույթի, եղել են.

1. **Ընտրությունների հետ կապված հանցագործություններ՝** 2 վարույթ,
2. **Հափշտակություններ՝** 163 վարույթ,
3. **Տնտեսական հանցագործություններ՝** 2 վարույթ,
4. **Խուլիգանություն՝** 1 վարույթ,
5. **Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ՝** 2 վարույթ,
6. **Թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 վարույթ,
7. **Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններ՝** 382 վարույթ,
8. **Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 վարույթ,
9. **Այլ հանցագործություններ՝** 95 վարույթ:

Դատավարական հարկադրանքի միջոցները

Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով ձերբակալվել է 435 անձ, որոնցից 1-ն ազատ է արձակվել ձերբակալման օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու, իսկ 293-ը՝ անազատության մեջ պահելու անհրաժեշտության վերացման հիմքերով:

Քննված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու 148 միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից բավարարվել է 84-ը, որից 6-ը՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի

նկատմամբ, բավարարվել է մասնակի 40-ը: Միջնորդությունները մերժելու մասին 24 որոշումներից 3-ի դեմ դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է:

Տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվել է 61, վարչական հսկողությունը՝ 6, պաշտոնավարման կասեցումը՝ 57, իսկ գրավը՝ 106 մեղադրյալների նկատմամբ:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելիս կարևորվել է դրա բացառիկ բնույթը, և դատարանին կալանավորման միջնորդություն ներկայացվել է բացառապես կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերի առկայության դեպքում՝ հաշվի առնելով նաև կոնկրետ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները

Նախաքննությունն ավարտված (դատարան ուղարկված և կարճված) 810 քրեական վարույթից *(առանց կրկնակիի)* 295-ն ավարտվել է մինչև 2 ամիս ժամկետում, 140-ը՝ 2-4 ամիս ժամկետում, 73-ը՝ 4-6 ամիս ժամկետում, 129-ը՝ 6-12 ամիս ժամկետում, 173-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետում:

Ավարտված քրեական վարույթներով կալանավորված է եղել 79 մեղադրյալ, որից 43-ը կալանքի տակ պահվել է մինչև 2 ամիս, 26-ը՝ 2-4 ամիս, 7-ը՝ 4-6 ամիս, 3-ը՝ 6-12 ամիս ժամկետներով:

Հանցագործությամբ պատճառված վնասի մասին

2024 թվականի ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասի չափը կազմել է 4.468.232.720 ՀՀ դրամ, որից պետությանը՝ 3.802.132.612 ՀՀ դրամ, համայնքին՝ 663.902.108 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց՝ 2.198.000 ՀՀ դրամ:

Ավարտված վարույթներով պատճառված ընդհանուր վնասից նախաքննության ընթացքում փաստացի դրամական տեսքով վերականգնվել է 477.556.413 ՀՀ դրամ, որից պետությանը՝ 274.431.774 ՀՀ դրամ, համայնքին՝ 201.594.639 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց՝ 1.530.000 ՀՀ դրամ:

Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման ռեալ միջոց՝ ավարտված քրեական վարույթներով արգելանք է դրվել ընդհանուր 275.315.827 ՀՀ դրամ արժողությամբ գույքի և դրամական միջոցների վրա:

Հաշվետու ժամանակահատվածում անավարտ մնացած քրեական վարույթներով վերականգնվել է 119.133.668 ՀՀ դրամ:

Միջնորդագրեր

Կարևորելով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելումը՝ հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար համապատասխան պաշտոնատար անձանց ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով քրեական վարույթներով ներկայացրել են 121 միջնորդագիր:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված միջնորդագրերը հիմնականում քննարկվել են պատշաճ կարգով, և օրենքով սահմանված մեկամսյա ժամկետներում քննարկման արդյունքների մասին հայտնվել է միջնորդագրի հեղինակին:

Հսկողություն և վերահսկողություն

Մեղադրական եզրակացությունները, քրեական վարույթը կարճելու և քննիչի մյուս դատավարական որոշումները, որպես կանոն, հաստատվել են դատավարական հսկողություն իրականացնող դատախազների կողմից: Սակայն տեղ են գտել նաև առանձին դեպքեր, երբ դատախազը վերացրել է քննիչի որոշումը կամ չի հաստատել մեղադրական եզրակացությունը:

Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանում դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից վերացվել կամ չի հաստատվել վարույթը կարճելու մասին 35 որոշում: Արձանագրվել է նաև հսկող դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը չհաստատելու պատճառով քրեական վարույթը վերադարձնելու 6 դեպք:

Դատախազի կողմից վերացվել է քրեական վարույթից մաս անջատելու մասին 4 որոշում:

Հարկ է նշել, որ դատախազի կողմից վարույթը կարճելու մասին վերացված կամ չհաստատված 35 որոշումներից 16-ի դեպքում հետագա նախաքննությամբ կրկին հիմնավորվել է քննիչների սկզբնական դիրքորոշումը, և քրեական վարույթների ընթացքը լուծվել է նույն կերպ, ինչպիսին եղել է սկզբում, բացառությամբ 2 վարույթի, որոնք ուղարկվել են ըստ քննչական ենթակայության: Մնացած վարույթների նախաքննությունը դեռ շարունակվում է, և դրանց արդյունքները հնարավոր կլինի վերլուծել հետագայում:

Դատախազի կողմից չհաստատված 6 մեղադրական եզրակացություններից 4-ի դեպքում հետագա նախաքննությամբ կրկին քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազին, դրանք հաստատվել և ուղարկվել են դատարան: Երկու դեպքում քրեական վարույթը կարճվել է:

Դատախազների կողմից քննիչների դատավարական որոշումների վերացման յուրաքանչյուր դեպքի պատճառները քննարկվել են Հակակոռուպցիոն կոմիտեում, և եթե պարզվել է, որ այդ վերացումները պայմանավորված են եղել քննիչի բացթողումներով, աշխատանքում թերություններն ու բացթողումները բացառելու ուղղությամբ ձեռնարկվել են գործուն միջոցներ:

Դիմում-հաղորդումներ

Հաշվետու ժամանակահատվածում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 5281 դիմում-հաղորդման, որից 803-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, 1090-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 94-ը սահմանված կարգով քննարկվել և դիմումատուին պատասխան է տրվել, 18-ն ուղարկվել է այլ մարմիններ քննարկման,

1834-ը կցվել է քրեական վարույթներին, 135-ը բավարարվել է, 48-ը մերժվել է, մնացած դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք:

Հարկ է նկատել, որ 2024 թվականին ստացված դիմում-հաղորդումների թիվը նախորդ՝ 2023 թվականի համեմատությամբ աճել է 1488-ով (2023 թվականին՝ 3793), ինչը ևս վկայում է քաղաքացիների շրջանում Հակակոռուպցիոն կոմիտեի նկատմամբ վստահության աճի և միաժամանակ աշխատանքի ծանրաբեռնվածության ավելացման մասին:

Քննիչների ծանրաբեռնվածությունը.

Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում միջինը փաստացի աշխատել է 51 քննիչ: Վարույթների քանակի աննախադեպ աճով պայմանավորված, ինչպես նաև գերծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով նախաքննություն են իրականացրել նաև Կոմիտեի վեց վարչությունների պետերի տեղակալները, սակայն այդ պայմաններում ևս միջին ծանրաբեռնվածությունը չի նվազել և այն կազմել է տարեկան միջինը 45 վարույթ մեկ քննիչի հաշվարկով (2289 քրեական վարույթ/51 քննիչ):

Քննիչների իրական ծանրաբեռնվածությունն առավել ճիշտ պատկերացնելու համար թվական տվյալների հետ զուգահեռ հարկ է նաև նկատի ունենալ, որ Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվել են այնպիսի քրեական վարույթներ, որոնցով մեկ վարույթում կատարված նախաքննության ծավալներն առավել ընդգրկուն են եղել, քան կարող էին լինել տասնյակ քրեական վարույթների ծավալները:

Քննիչների ծանրաբեռնվածությունը ներկայացնելիս հարկ է նշել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում նրանք մասնակցել են իրենց կայացրած որոշումների դեմ բերված բողոքների քննության դատական նիստերին հակակոռուպցիոն և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարաններում:

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում կազմվել է 91 քննչական խումբ:

Օպերատիվ-հետախուզական վարչության կատարած աշխատանքների վերաբերյալ

Օպերատիվ-հետախուզական վարչությանն օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար սահմանվել է օպերատիվ-հետախուզական պաշտոնների 120 հաստիք, սակայն դրանք ամբողջությամբ համալրված չեն, և վարչությունն օրենքով ու կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները 2024 թվականի ընթացքում իրականացրել է առավելագույնը **77** հաստիքով կամ Օրենքով նախատեսված անձնակազմի **64,2%**-ով: 2024 թվականի ընթացքում պարբերաբար անցկացվող մրցույթների արդյունքներով համալրվող, ինչպես նաև ամբողջ տարվա ընթացքում անհրաժեշտ տեխնիկական միջոցներով հագեցվող՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչությունը զուգահեռաբար իրականացրել է կոռուպցիոն հանցանքների բացահայտման և հետաքննության գործառույթներ, նույն պատճառներով՝ կրկին մեծ ծանրաբեռնվածության պայմաններում:

Հիշյալ ժամանակահատվածում վարչության ծառայողների կողմից կազմվել է թվով **1610** օպերատիվ-հաշվառման գործ, որոնց շրջանակներում իրականացվել են շուրջ

4418 օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, քննարկվել են դիմումներ, նախաքննության մարմիններ (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և ՀՀ քննչական կոմիտե) ներկայացվել է հանցագործության մասին **89** հաղորդում:

Որպես հետաքննության մարմին՝ օպերատիվ-հետախուզական վարչության կողմից քննիչի հանձնարարությամբ նախաքննության է ներկայացվել **631** անձ, կատարվել են **325** գաղտնի քննչական գործողություններ, իրականացվել է **306** քննչական գործողությունների օժանդակում, **595** անձի ձերբակալում: Ստացվել և կատարվել է **1046** քննչական հանձնարարություն:

Կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության գործունեության արդյունավետության ցուցանիշներն արտացոլված են սույն հաղորդման մինչդատական վարույթին վերաբերող բաժիններում, նկատի ունենալով, որ ՕՀ վարչության կողմից բացահայտված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործությունների դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնցով քննությունը կատարել են Կոմիտեի քննչական վարչությունների քննիչները: Բացի այդ, Կոմիտեում քննվող քրեական բոլոր վարույթներով ՕՀ վարչության ծառայողներն իրականացրել են պատշաճ հետաքննություն:

Այլ գործառույթներ

2024 թվականի ընթացքում ծավալուն աշխատանքներ են իրականացվել Հակակոռուպցիոն կոմիտեի վերջնական ձևավորման ուղղությամբ, որոնց մի մասը շարունակվելու է նաև 2025 թվականի ընթացքում:

Նկատի ունենալով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի կայացման, գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական երաշխիքն արհեստավարժ կադրերն են և նրանց մասնագիտական պատրաստվածության անընդհատ բարձրացումը՝ 2024 թվականի ընթացքում այս ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել:

2024 թվականի ընթացքում Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով հայտարարված 10 մրցույթներից անցկացվել է 9-ը, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել են 146 թեկնածուներ: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այնպես էլ դիտորդներ և հոգեբան:

Մրցույթներին մասնակցած թեկնածուներից հաղթող են ճանաչվել 32-ը (12-ը ինքնավար պաշտոնների համար դիմած, իսկ 20-ը՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համար դիմած), որոնք էլ նշանակվել են համապատասխան պաշտոնների:

2024 թվականի ընթացքում մրցույթների հաղթող ճանաչվածներից 11-ը վերապատրաստում են անցել ՀՀ ոստիկանության ակադեմիայում, իսկ 7-ը մասնագիտական պատրաստում են անցել ՀՀ արդարադատության ակադեմիայում:

Կոմիտեի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 5 արտաքին մրցույթ: Մրցույթներին մասնակցելու համար դիմել է 22 քաղաքացի, հաղթող են ճանաչվել 2 մասնակիցներ և նշանակվել համապատասխան պաշտոններում:

Կոմիտեի 6 քաղաքացիական ծառայողների համար կազմակերպվել է կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներ՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թվականի կարիքների բավարարման և անխափան աշխատանքային պայմաններն ապահովելու համար կազմակերպվել են գնման ընթացակարգեր: Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է էլեկտրոնային աճուրդի 4 ընթացակարգ, որոնց ամփոփման արդյունքում կնքվել են թվով 13 պայմանագրեր, դրանց ընդհանուր գումարը կազմել է 14. 078. 000 ՀՀ դրամ:

Կոմիտեի ծառայողների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով ևս կազմակերպվել են 3 էլեկտրոնային աճուրդներ և 1 Մեկ անձ գնման ընթացակարգ, որոնց ամփոփման արդյունքում կնքվել են թվով 8 պայմանագրեր, դրանց ընդհանուր գումարը կազմում է 27. 592. 000 ՀՀ դրամ:

Տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման համար կազմակերպված մրցույթների քանակը 2 է, որի արդյունքում կնքված պայմանագրերի թիվը կազմում է 9, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 2. 717. 200 ՀՀ դրամ:

Կոմիտեի ծառայողներին վառելիքով ապահովելու համար կազմակերպվել է վառելիքի ձեռքբերման 4 մրցույթ, որոնց արդյունքում կնքվել է 2 պայմանագիր: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 84. 284. 243 ՀՀ դրամ:

Կոմիտեի ծառայողների համալրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ գույքի և տեխնիկայի ձեռքբերման համար կազմակերպվել են թվով 6 մրցույթներ, և՛ գնանշման հարցման և՛ էլեկտրոնային աճուրդ ընթացակարգերով: Մրցույթների ամփոփման արդյունքում կնքված պայմանագրերի թիվը կազմում է 24-ը, իսկ կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը՝ 35. 857. 000 ՀՀ դրամ:

2024 թվականի համար կազմակերպվել են նաև այլ ընթացակարգեր, որոնց ընդհանուր թիվը կազմում է 160:

Կոմիտեի ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման և քննության արդյունավետության ապահովման մեջ մեծ է եղել օտարերկրյա իրավապահ մարմինների հետ համագործակցության դերն ու նշանակությունը՝ ինչպես լավագույն փորձը փոխառելու, այնպես էլ բուն մինչդատական վարույթի ընթացքում իրավական փոխօգնության առումով, հատկապես հաշվի առնելով, որ մի շարք կոռուպցիոն հանցագործություններ, ինչպիսիք են փողերի լվացումը, ապօրինի հարստացումը, հաճախ ունեն անդրազգային բնույթ և առանց այլ երկրների մեր գործընկերների աջակցության որոշ դեպքերում անհնար է պատշաճ քննությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեն մշտական կապի մեջ է գտնվել միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և դրա լավագույն տարրերի որդեգրման նպատակով: Հակակոռուպցիոն կոմիտեն շարունակում է արդյունավետ կերպով համագործակցել ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, Իրավապահ համագործակցության գերմանական հիմնադրամի, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ԱՄՆ հետաքննությունների դաշնային

բյուրոյի, Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի, Ավստրիայի կոռուպցիայի դեմ պայքարի դաշնային բյուրոյի և Իտալիայի Ֆինանսական գվարդիայի հետ:

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են 67 աշխատաժողովների, խորհրդակցությունների, քննարկումների և սեմինարների, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում իրականացվող աշխատանքներին, միջազգային գործընկերների կողմից իրականացվող՝ Հայաստանի հակակոռուպցիոն բարեփոխումների աջակցության ծրագրերին, կոռուպցիայի դեմ պայքարին, Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին ու հզորացմանը:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նախագահի տեղակալները և համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները 14 հանդիպում են ունեցել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, օտարերկրյա կազմակերպությունների, համանման գործառույթներ իրականացնող մարմինների, ինչպես նաև միջազգային այլ կառույցների ներկայացուցիչների հետ: Առաջնահերթ աշխատանքների համատեքստում շարունակվել է դիտարկվել Հակակոռուպցիոն կոմիտեի արդյունավետ գործունեության համար պահանջվող տեխնիկական հագեցվածության հարցերը, ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման և գործարկման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման հնարավորությունը, ինչպես նաև քննիչների և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների կարողությունների ու հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորումից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից («ԹՊԻՀ», «INL») շարունակական աշխատանքներ են տարվում կառույցի հետ գործընկերային հարաբերությունների խորացման և համագործակցության օրակարգի ընդլայնման նպատակով: Հիշյալ համագործակցության առանցքային ուղղություններից է Կոմիտեի ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստման դասընթացների անցկացումը: Այդ շրջանակում 2024 թվականի ընթացքում Կոմիտեի քննիչների համար ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ԹՊԻՀ-ի կողմից կազմակերպվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, որոնք վերաբերել են միջազգային իրավական փոխօգնության առանձնահատկություններին, փողերի լվացման ռիսկերի վերհանմանը, փողերի լվացման գործերով քննությանը, քրեական հետապնդմանը և այլն:

Հակակոռուպցիոն կոմիտեի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի համագործակցության արդյունքում 2024 թվականի մայիսի 31-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց, որը նվիրված է եղել ֆինանսական քննություններին, փողերի լվացման առանձնահատկություններին և կրիպտոարժույթին:

2024 թվականի նոյեմբերի 27-ին Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար Իրավապահ համագործակցության գերմանական հիմնադրամի կողմից կազմակերպվել է վերապատրաստում-դասընթաց, որը վերաբերել է փողերի լվացմանը, վերջինիս

բացահայտմանն ուղղված օպերատիվ-հետախուզական աշխատանքների առանձնահատկություններին և կրիպտոարժույթին:

Նշված ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են Հունգարիայում և Մոլդովայում կազմակերպված դասընթացներին, որոնք վերաբերել են ներքին/ծառայողական քննություններին, ֆինանսական քննություններին, փողերի լվացմանը և ակտիվների վերականգնմանը, միջազգային փողերի լվացմանը, ֆինանսական հանցագործությունների բացահայտմանը և կանխարգելմանը: Կոմիտեի ներկայացուցիչը մասնակցել է նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի իրավապահ ցանցի 14-րդ հանդիպմանը:

Դեռևս 2023 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ֆինանսական գվարդիայի միջև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համագործակցության ընդլայնման նպատակով կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում Ֆինանսական գվարդիայի ղեկավար կազմի հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել հիշյալ կառույցում Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ ծառայողների վերապատրաստման կազմակերպման վերաբերյալ: Հիշյալ վերապատրաստումն իրականացվել է 2024 թվականի փետրվարին: Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող երկու աշխատակից Իտալիայի Ֆինանսական գվարդիայում մասնակցել է օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններին վերաբերող հանդիպումներին, քննարկումներին, որոնց ընթացքում Իտալիայի գործընկերները կիսվել են Ֆինանսական գվարդիայի առաջավոր փորձով և հետագա համագործակցության պատրաստակամություն հայտնել:

2024 թվականի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են տարվել Վրաստանի պետական անվտանգության ծառայության հետ 2025 թվականին փոխըմբռնման հուշագիր ստորագրելու ուղղությամբ:

2023 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննվող 7 քրեական վարույթների շրջանակում օտարերկրյա պետություններ է ուղարկվել իրավական փոխօգնության 8 հարցում: 2024 թվականի ընթացքում, այդ թվում նախորդ տարիներին ուղարկված միջազգային իրավական փոխօգնության հարցումներով, ստացվել է 9 պատասխան: Հիշյալ ժամանակահատվածում Կոմիտեն օտարերկրյա պետություններից ստացել է իրավական փոխօգնության 2 հարցում, որոնք կատարվել են:

Կոմիտեի կողմից 2024 թվականի ընթացքում մշակվել է օրենքի 5 նախագիծ: Դրանք են՝

1) «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ Լեռնային Ղարաբաղի քննչական և դատախազական մարմիններում պաշտոն զբաղեցրած անձանց շնորհված դասային աստիճանները Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակելիս հաշվի առնելու և օրենքով սահմանված համարժեք դասային աստիճաններին համապատասխանեցնելու, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց շնորհակալագրից, հուշանվերից և դրամական պարգևատրումից բացի, մեդալով կամ կրծքանշանով պարգևատրելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ:

2) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների կազմակերպման, նախապատրաստման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի կարգը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կողմից սահմանելու հնարավորության, Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը նաև կաշառք տալու, կաշառք ստանալու հոդվածներով ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ կատարելու հնարավորության և մի շարք այլ նորմերի կարգավորման վերաբերյալ:

3) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հասկացությունների շարքում որպես կաշառք կամ որպես ապօրինի վարձատրություն տրվող գույքի կամ օգուտի մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը ամրագրելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածը հանցակազմի որակյալ և առավել որակյալ տեսակներով լրացնելու վերաբերյալ:

4) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր՝ իրեղեն ապացույց ճանաչելու ընթացքում գործնականում առաջացող խնդիրների լուծման, ինչպես նաև իրեղեն ապացույց ճանաչված առարկայի հետ ապօրինի գործողություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվություն նախատեսելու վերաբերյալ:

Կոմիտեի բնականոն գործունեությունն ապավովելու համար մշակվել է Վարչապետի որոշման 1 նախագիծ՝ Հակակոռուպցիոն կոմիտեին ևս 5 հաստիք հատկացնելու վերաբերյալ:

Կոմիտեի բնականոն և պատշաճ գործունեությունն ապահովելու նպատակով մշակվել են նաև Կառավարության որոշման 4 նախագծեր՝ զենքի, հատուկ միջոցների և անձնական պաշտպանության հատուկ միջոցների հետ կապված հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև Կոմիտեին տրամադրվող գործառնական և հատուկ նշանակության ավտոմեքենաների սահմանաքանակը հստակեցնելու նպատակով:

Մշակվել են նաև 15-ից ավել ներքին իրավական ակտեր:

2024 թվականի ընթացքում ուսումնասիրվել են ավելի քան 235 իրավական ակտերի նախագծեր, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի 78 նախագծերի վերաբերյալ ներկայացվել են դիտողություններ և առաջարկություններ, այդ թվում՝ մասնակցություն է ապահովվել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումներին:

Կարևորելով Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկ գործելաոճն ու հաշվետվողականությունը Կոմիտեի գործունեության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հարցում և այդ կերպ նաև կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքը՝ 2024 թվականին ևս շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման ուղղությամբ:

Մասնավորապես լուսաբանվել են հանրության շրջանում հնչեղություն ստացած քրեական վարույթների ընթացքը, Կոմիտեի գործունեությանը վերաբերելի իրավական ակտերը, միջազգային համագործակցության շրջանակում Կոմիտեի ներկայացուցիչների հետ կազմակերպված հանդիպումները: Քննարկումներ ու հանդիպումներ են կազմակերպվել նաև ուսանողների, ինչպես նաև լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բուհեր և այլ հաստատություններ արտագնա այցերի ձևաչափով:

Լրատվամիջոցների գրավոր հարցումներին տրվել է 116 պատասխան, իսկ քրեական վարույթների լուսաբանման կապակցությամբ համացանցում տարածվել են 50 հաղորդագրություններ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Ամփոփելով Հակակոռուպցիոն կոմիտեի՝ 2024 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ Կոմիտեն կատարել է հաշվետու ժամանակահատվածի համար իր առջև դրված խնդիրները՝ կազմակերպել և իրականացրել է օրենքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում, դրանց վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննություն, պայմաններ է ապահովել նոր ձևավորված իրավապահ մարմնի գործունեության համար, միջոցառումներ է ձեռնարկել գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ծառայողների գործունեության կազմակերպահիրավական, սոցիալական երաշխիքները ապահովելու, քննչական աշխատանքներում նախադեպային իրավունքի անմիջական կիրառումը, ինչպես նաև տեսություն-պրակտիկա ներդաշնակ կապը կատարելագործելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն կոմիտե